ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Ս. Ժելեզկինի անվան II միջազգային փառատոնում Երևանի խամաճիկների պետական թատրոնի մասնակցության վերաբերյալ

Երևանի խամաճիկների պետական թատրոնը 2026 թվականի սեպտեմբերին հաջողությամբ մասնակցել է Միտիշչիում (Մոսկվայի մարզ) անցկացվող Ժելեզկինի անվան II միջազգային տիկնիկային թատրոնների փառատոնին:

- Երևանի խամաճիկների պետական թատրոնը փառատոնի շրջանակներում սեպտեմբերի 20-ին ներկայացրել է «Կարապի լիճը»բեմադրությունը:
- Ցուցադրությունը տեղի է ունեցել Միտիշչիի «Օգնիվո» տիկնիկային թատրոնի բեմում: Ներկայացումը ցուցադրվել է հայերենով, ռուսերեն սինխրոն թարգմանությամբ:
- Փառատոնն ինքնին անցկացվել է սեպտեմբերի 16-ից 21-ը, որին մասնակցել են տասնյակից ավելի ընտրված թատերախմբեր տարբեր երկրներից և ՌԴ:

Միտիշչիում ընթացող Ժելեզկինի անվան տիկնիկային թատրոնների II միջազգային փառատոնի շրջանակում տեղի ունեցավ ծրագրի ամենասպասված ու պոետիկ իրադարձություններից մեկը: Ս. Ժելեզկինի անվան Միտիշչիի «Օգնիվո» տիկնիկային թատրոնի բեմում Երևանի մարիոնետների պետական թատրոնը ներկայացրեց համաշխարհային դասական գլուխգործոցի իր յուրօրինակ տիկնիկային մեկնաբանությունը՝ ռեժիսոր Ս. Մովսիսյանի բեմադրած «Կարապի լիճը» ներկայացումը:

Բեմադրությունը, տեղի հանդիսատեսի և քննադատների շրջանում հայտնվել էր ուշադրության կենտրոնում: Թատրոնի կամերային դահլիճը հազիվ էր տեղավորում բոլոր ցանկացողներին, ովքեր եկել էին հաղորդակից դառնալու սիրո լեգենդար պատմությանը՝ պատմված մարիոնետների նրբագեղ լեզվով:

Երևանի խամաճիկների պետական թատրոնը հայտնի է բեմական արվեստի նկատմամբ իր նուրբ փիլիսոփայական մոտեցմամբ, և «Կարապի լիճը» բացառություն չէր: Պ. Չայկովսկու բալետը, որը մանկուց ծանոթ է յուրաքանչյուրին, միտիշչյան բեմում ստացավ բոլորովին նոր՝ նուրբ ու հուզիչ շունչ:

Տիկնիկավարները դրսևորեցին վարպետության բարձրագույն մակարդակ. տիկնիկների պլաստիկան բառացիորեն ջնջում էր անկենդան նյութի և մարդկային

հոգու միջև եղած սահմանը: Ներկայացման լուսային պարտիտուրան, որը մեղմորեն անցնում էր լճի խորը մթնշաղից մինչև պալատական այգու հանդիսավոր ոսկեգույնը, ստեղծում էր հեքիաթի մեջ լիակատար ընկղմվելու զգացողություն:

Փառատոնի պրոֆեսիոնալ ժյուրին բարձր գնահատեց հայ գործընկերների հարգալից վերաբերմունքը ակադեմիական ժառանգության հանդեպ և նրանց կարողությունը՝ դասական բալետային պատումը վերածելու խորը տիկնիկային ասելիքի:

«Զարմանալի է, թե ինչպես է հաջողվել նման մոնումենտալ և տեխնիկապես բարդ բալետային կտավը տեղափոխել մարիոնետների թելերի վրա՝ չկորցնելով դրա դրամատիզմի և պարարվեստի կախարդանքի ոչ մի կաթիլ: Երևանի թատրոնը դրսևորեց ձևի վիրտուոզ տիրապետում. մարիոնետն այստեղ ոչ թե պարզապես նմանակում է բալերինային, այլ փոխանցում է պարի բուն հոգին: Սա մաքուր վիզուալ պոեզիա է, որն ընդլայնում է տիկնիկային թատրոնի սովորական սահմանները», — իր կարծիքով կիսվել է ժյուրիի անդամ, թատերագետ և քննադատ Պավել Ռուդնևը:

Ցուցադրության գլխավոր արդյունքը մշակութային կամ լեզվական արգելքների իսպառ բացակայությունն էր: Չայկովսկու երաժշտությունը՝ վիրտուոզ վիզուալ ռեժիսուրայի հետ համադրված, հանդիսատեսի հետ խոսում էր էմոցիաների համընդհանուր լեզվով:

Ներկայացման ավարտը հանդիսատեսը դիմավորեց տևական հոտնկայս ծափողջույններով և հիացմունքի անկեղծ արցունքներով: «Կարապի լիճը» ներկայացումը դարձավ Միտիշչիում ընթացող փառատոնային շաբաթվա իսկական զարդը՝ վերահաստատելով Ժելեզկինի անվան մրցանակաբաշխության կարգավիճակը որպես հարթակ, որտեղ ծնվում են լավագույն միջազգային մշակութային երկխոսությունները:

Երևանի խամաճիկների պետական թատրոնը «Ժելեզկինի անվան» տիկնիկային թատրոնների միջազգային փառատոն-մրցանակաբաշխության շրջանակում տպավորիչ և հուզիչ անակնկալ էր պատրաստել հանդիսատեսի համար.

Փառատոնի բացման արարողությանը թատրոնը ներկայացրեց տիկնիկային բեմականացում հայտնի «Մեր մանկության տանգոն» ֆիլմից՝ վերակենդանացնելով Սիրանուշի և Ռուբենի անմահ կերպարներն ու նրանց անկրկնելի երկխոսությունը:

Սեպտեմբերի 21-ին մեր թատրոնը փառատոնի հանդիսավոր փակման արարողության ժամանակ հանդես եկավ ևս մեկ հատուկ և խորհրդանշական կատարմամբ: Թատրոնը ներկայացրեց փոքրիկ բեմականացում մեծանուն գրող Վիլիամ Սարոյանի «Ն տրամվային սպասելիս» պատմվածքի հիման վրա: Այս ելույթը թատրոնի կողմից յուրօրինակ մշակութային ընծա էր՝ նվիրված Հայաստանի Անկախության տոնին, որը խորհրդանշականորեն համընկավ փառատոնի փակման օրվա հետ: Այն կրում էր նաև տոնական ուղերձ՝ ձոնված հայրենիքի անկախության հոբելյանական տարեդարձին: Սարոյանական ջերմ մթնոլորտն ու երևանյան կոլորիտը տիկնիկների միջոցով տեղափոխվել էին միջազգային բեմ՝ արժանանալով ներկաների բարձր գնահատականին:

Ռուսաստանում Հայաստանի դեսպանատան մշակույթի կենտրոնում կազմակերպվել է հանդիպում Երևանի խամաճիկների պետական թատրոնի ստեղծագործական կազմի հետ:
Հանդիպման ընթացքում թատրոնի արտիստները ներկայացրել են հատվածներ Մոսկվայի հանդիսատեսի կողմից սիրված «Երևանյան տրամվայ» ներկայացումից, պատմել թատրոնի ժանրային առանձնահատկությունների ու մասնագիտական նրբությունների մասին, ինչպես նաև կիսվել իրենց նոր ստեղծագործական ծրագրերով:

Մոսկվայի և Մոսկվայի մարզի հայկական կիրակնօրյա դպրոցների սաների համար, Մոսկվայի հայկական թատրոնի բեմում, Երևանի խամաճիկների պետական թատրոնը ներկայացրեց «Կարապի լիճը» բեմադրությունը:


20 сентября
в 13:00
Театр кукол
«Огниво»
большой зал
«Лебединое озеро» 6+
Ереванский государственный театр марионеток, Армения
на армянском языке с синхронным русским переводом


МЕЖДУНАРОДНЫЙ
ФЕСТИВАЛЬ-ПРЕМИЯ
ТЕАТРОВ КУКОЛ
«Имени Образцова»













https://vk.ru/wall-61596573_35958

https://armenpress.am/hy/article/1260817

https://rutube.ru/video/542a02585a287de90e182f392a0b3322/

https://m.vk.ru/premia.zhelezkina?own=0#wall

https://ognivo.ru/projects/festival-imeni-zelezkina